

ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին

Համաձայն 2017 թվականի հունիսի 13-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացած հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ մարզի համայնքների ղեկավարների հետ պետք է կատարվեն արդյունագործական հիմքով վարելահողերի խոշորացման ու 3000 և ավելի հատարածության վրա դաշտավարության ապրանքային արտադրության կազմակերպման հնարավորությունների և դրա արդյունավետության հարցերի շուրջ քննարկումներ: Այդ ուղղությամբ համագործակցության առաջարկ է ստացվել դազախական «Շամրոկ» ԱԲԸ-ի կողմից:

Հաշվի առնելով աշնանային գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար նախատեսվող սեղմ ժամկետները, ծրագրի քննարկումը մարզում կազմակերպելու է 2017 թվականի հունիսի 29-ին, ժամը 11⁰⁰-ին:

Համայնքում առկա ռեսուրսների և դրանց ծրագրով առաջադրվող պահանջներին համապատասխանության, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքում առաջացող հնարավոր խոչնդոտների և ռիսկերի վերաբերյալ ամփոփված տվյալները մինչև ս/թ հունիսի 27-ը ներկայացնել Շիրակի մարզպետարան:

Պայմանագիր

ապրանքային գյուղատնտեսական արտադրության ֆինանսավորման

Ցանքային և բերքահավաքային աշխատանքների ֆինանսավորման սույն պայմանագիրը

_____ (այսուհետ«Պայմանագիր») կնքված

_____ (այսուհետ«Պայմանագրի ամսաթիվ») ք.

Աստանայում _____ միջև, ի դեմս հիմնադիր _____

Բնակվող _____ հասցեում, անձը հաստատող _____

Այսուհետ«Գյուղատնտեսական արտադրանք արտադրող»մի կողմից և _____ (БИН 140 840 009 486) ի դեմսՏնօրենի _____ գործելով

Կանոնադրության հիման վրա, այսուհետ«Ներդրող»՝ մյուս կողմից:

Հետագայում սույն Պայմանագրում Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը և Ներդրողը առանձին նշվելու են «Կողմ», միասին «Կողմեր»:

1. Ապրանքային գյուղատնտեսական արտադրության ֆինանսավորման պայմանները

1.1 Ապրանքային գյուղատնտեսական արտադրության ֆինանսավորումը իրականացվում է Ներդրողի միջոցով՝ Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի՝ գյուղատնտեսական աշխատանքները իրականացնելու ընթացքում՝ ներառյալ հողի վերամշակումը, ցանքային աշխատանքները, բերքահավաքը,

1.2 Ֆինանսավորումը իրականացվում է 0%-ով

1.3 Ներդրողը և Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը ձգտում են նվազեցնել ապրանքային գյուղատնտեսական արտադրության իրականացման ծախսերը՝ մասնավորապես այն միջոցներով, որոնք նախատեսված են սույն պայմանագրում,

1.4. Կողմերը եկել են համաձայնության, որ Ներդրողը վերահսկում է ապրանքային գյուղատնտեսական արտադրության իրականացման գործընթացը ամբողջությամբ՝ մասնավորապես այն միջոցներով, որոնք նախատեսված են սույն պայմանագրում,

1.5. Ապրանքային գյուղատնտեսական արտադրության արդյունքների իրականացման ընթացքում եկամտի բաշխումը հանդիսանում է ներդրողի կողմից կատարված ծախսերի փոխհատուցումը:

2. Պայմանագրում օգտագործվող հասկացությունները և հապավումները

2.1. Կողմերը պայմանավորվածություն ունեն, որ տերմինները, որոնք օգտագործվում են սույն պայմանագրում (ներառյալ ներածական կողմը և ներածությունը) ունեն Պայմանագրի տեքստում նշված նշանակությունը:

2.2. Այն դեպքում, երբ որևէ տերմին որոշված չէ Պայմանագրով, նշանակությունը բացատրվում է մեկնաբանության հիման վրա՝ քաղաքացիական օրենսդրության նորմերի մեկնաբանության համապատասխան հաստատված Ղազախստանի Հանրապետության քաղաքացիական կոդեքսով:

3. Պայմանագրի առարկան

3.1. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի հիմնադիրը տրամադրում է Ներդրողին Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործունեության հսկողության լիազորություն՝ սույն պայմանագրում նշված պայմաններով (այսուհետ՝ հսկողության լիազորություններ): Հսկողության լիազորությունները Ներդրողին տալիս են իրավունք կանխորոշելու Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմինների որոշումները իրականացնել՝ ելնելով բացառապես Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի արդյունավետ և օրինական գործունեություն ապահովելու տեսանկյունից, սույն Պայմանագրով ներածության նորմերի իրականացման համար:

3.2 Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը պարտավորվում է ամեն տարի, 3 տարվա ընթացքում, փոխանցել իր կողմից արտադրված ողջ գյուղմթերքի ծավալը Ներդրողին վերամշակման կամ վաճառքի համար: Այդ թվում, գյուղատնտեսական

ապրանքների ամենամյա գինը պետք է որոշվի կողմերի միջոցով՝ ելնելով շուկայական միտումներից, ինչպես նաև Ներդրողի առաջարկությունների հիմնավորումներից:

Սույն պայմանագրի իրականացման արդյունքում ստացված եկամուտը բաշխվում է հետևյալ կերպ.

Ներդրող %, _____

Գյուղատնտեսական արտադրանք արտադրող%: _____

3.3. Սույն Պայմանագրի կնքումը չի համարվում Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կանոնադրական կապիտալում Ներդրողին մանակցության իրավունքի փոխանցում, ինչպես նաև չի նշանակում Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի հիմնադրի՝ իրեն պատկանելիք բաժնետոմսերի մասնակցության իրավունքից զրկում, կամ այդ իրավունքների իրացման որևէ սահմանափակում:

Սույն պայմանագրի համաձայն հաստատվում է ժամանակավոր հսկողություն Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործունեության նկատմամբ:

4. Ապրանքային գյուղատնտեսական արտադրության ֆինանսավորման իրականացման կարգը

4.1. Սույն պայմանագրի իրականացման վայրը հանդիսանում է Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գտնվելու վայրը: Լիազորությունները, տրված Ներդրողին սույն պայմանագրի համաձայն, ենթակա է իրականացման 36 (երեսունվեց) ամսվա ընթացքում՝ Պայմանագրի կնքման պահից սկսած: Արդյունքին չհասնելու կամ պայմանների վերանայման դեպքում նշված ժամկետը երկարաձգվում է ևս 36 (երեսունվեց) ամսով՝ առանց Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի և նրաղեկավարի համաձայնության:

4.2. Լիզորությունները, տրված Ներդրողին սույն Պայմանագրի հիման վրա, ենթակա են իրականացման անձամբ Ներդրողի կողմից, Պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում: Պայմանագրի իրականացման ընթացքում լիազորությունների տրամադրում երրորդ անձանց Ներդրողի կողմից չի թույլատրվում: Պահանջների զիջում, պարտքի փոխանցում, կատարողական սույն պայմանագրի համաձայն Կողմերից մեկի վրա նույնպես չի թույլատրվում:

4.3. Սույն Պայմանագրի համաձայն Ներդրողին տրված Գյուղատնտեսական արտադրողի որոշումները կարգավորելու իրավունքը ներառում է իր մեջ հետևյալ լիազորությունների իրականացման հնարավորություն.

- Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի ընդունող մարմնի բոլոր որոշումների նախնական համաձայնեցում Ներդրողի հետ՝ ինչպես նաև գործունեության օպերատիվ կառավարման հարցերի շուրջ, նաև (առանց սահմանափակման) ցանքը, բերքահավաքը և Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի հողից ստացված բերքի սպառումը:

- Ցանկացած որոշումների ընդունման և/կամ իրականացման արգելափակում Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմինների կողմից դրանց ընդունման ցանկացած փուլում (քննարկման կամ իրականացման)՝ բացառությամբ Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործունեության օպերատիվ կառավարման հարցերի շուրջ իր իրականացնող մարմնի կողմից:

4.4.Սույն կետի իրականացման նպատակով, հողատարածքների(ինչպես նաև դրանցում ցանված մրգի և բերքի), հիմնական միջոցների, Գյուղատնտեսական արտադրանք արտադրողին պատկանող բանկային հաշիվների կառավարում և տիրապետում:

4.5.Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի ղեկավար մարմնի որոշումները կարող են ընդունվել միայն Ներդրողի կողմից՝ համապատասխան հարցերի ասպեկտների և այդ հարցերի շուրջ իրենց դիրքորոշման դիմումը քննարկելուց հետո: Այդ դիմումը պետք է հասցեագրված լինի այն մարմնին, ում իրավասության շրջանակներին է պատկանում համապատասխան որոշման ընդունումը:

4.6. Ներդրողի անունից, սույն Պայմանագրի շրջանակներում, անհրաժեշտ որոշումներ ընդունում և կատարում է իր Տնօրենը և Դիտորդական խորհուրդը: Սույն կետի իրականացումը նշանակվում է տնօրենին և Ներդրողի հաշվապահին:

4.7.Տնտեսական գործունեության իրականացման ընթացքում Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը կազմում է բոլոր ծախսերի հաշվարկը, որը հաստատվում է Ներդրողի կողմից, ինչպես նաև պատասխանատու է գործընկերների իրավասուբյեկտության համար:

4.8.Գյուղատնտեսական արտադրողը պատասխանատու է Ներդրողին տրամադրվող բոլոր տեղեկությունների ճշգրտության, Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գյուղատնտեսական գործունեության իրականացման նկատմամբ Ներդրողի որոշումների իրականացման համար (ներառյալ, բայց ոչ սահմանափակումով՝ սերմերի գնման գործարքների, ցանքի, բերքահավաքի և առաքման արժեքի ստուգում և իրականացում):

4.9. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի թափանցիկ գործունեության ապահովման նպատակով Ներդրողի հաշվապահին փոխանցվում է վերջինիս վճարումների համակարգը, ներառյալ, բայց ոչ սահմանափակումով, սպասարկող բանկի Հաճախորդ- Բանկ համակարգերը, կոդերի գեներատորները:

4.10. Ներդրողը պատասխանատու չէ մինչ սույն պայմանագրի ավարտը առաջացած, նաև պայմանագրի հետ կապ չունեցող պարտավորությունների համար:

4.11. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը իրավունք չունի հրաժարվել իր վրա դրված խնդիրներից և պարտավորություններից՝ մինչ պայմանագրի ավարտը: Պարտավորությունները կատարել հրաժարվելուց հետո Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը փոխհատուցում է սույնպայմանագրի շրջանակներում Ներդրողի կրած բոլոր ծախսերը, ինչպես նաև բաց թողնված օգուտը, որքան Ներդրողը հաշվարկում է:

4.12. Ներդրողը իրավունք ունի միջամտելու Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործառնական գործունեության հարցերին, որը իրականացվում է Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործադիր մարմնի կողմից:

4.13. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը ապահովում է իր կողմից աճեցված(արտադրված) գյուղարտադրանքի պահպանումը:

4.14. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը և Ներդրողը ամեն տարի կազմում են արձանագրություն, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մաս, ծախսերի և աճեցված գյուղարտադրանքի ծավալի սահմանումը և հաստատումը: Այն դեպքում, երբ եղանակային վատ պայմանները բերում են գյուղատնտեսական արտադրանքի կորստի, Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի պարտավորությունն է ընթացիկ տարում հաստատված արտադրանքի առաքումը փոխանցել մյուս տարի: Ներդրման ծավալը փոխանցվում է մյուս տարի:

4.15. Եթե բերքի կորուստը կամ վնասումը եղել է Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի (կամ իր աշխատակիցների) ոչ պրոֆեսիոնալ կամ ոչ իրավական գործունեության հետևանք, ապա, այդ դեպքում, Ներդրողը իրավունք է ունենում կիրառել բոլոր իրավական միջոցները իր ներդրումների վերադարձի համար՝ պետության տրամադրած օրենսդրությամբ, այլ միջազգային իրավասության դատարանների միջոցով:

4.16. Եկամտի բաշխումը կազմակերպվում է գյուղատնտեսական աշխատանքներում (մասնավորապես անցած տարիներում, նոր բերքի և այլ ծախսերի համար) Ներդրողի կատարած բոլոր ծախսերի փոխհատուցումից հետո:

5. Կողմերի պարտավորությունները

5.2. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի պարտավորություններն են.

5.2.1 Բարեխղճորեն կատարել պարտավորությունները, համաձայնեցնել բոլոր հարցերի քայլերը՝ կապված ցանքային և բերքահավաքային աշխատանքների հետ,

5.2.2 Աշխատանքի ընթացքի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության տրամադրել, ծախսված նյութերի, սերմերի,

5.2.3 Ներկայացնել հաշվապահական հաշվառում,

5.2.4 Տրամադրել բոլոր տեսակի ծախսերի հաշվարկ, ինչպիսիք են՝ աշխատակիցների աշխատավարձի ֆոնդ, էնեկտրաէներգիայի ծախսեր, թունաքիմիկատներ, պարարտանյութեր, հարկային վճարումներ:

5.2.5 Չընդունել միանձնյա որոշումներ արտադրված գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի մասին:

5.2.6 Ձեռնարկել բոլոր քայլերը, որպեսզի ժամանակին սկսվեն ցանքի և բերքահավաքի աշխատանքները, ինչպես նաև նախապես կատարել ամբողջ անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Ոչ բարեխիղճ աշխատանքի դեպքում, որը հանգեցրել է ծանր հետևանքների, որոնք կարող են բերել ֆինանսական կորուստների և բեռների վնասման, Ներդրողը իրեն իրավունք է վերապահում օգտագործել Ղազախստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված գործող բոլոր օրինական միջոցները (ներառյալ քրեական հետախուզումը, քաղաքացիական արտադրությունը, հողատարածքների օտարումը):

5.2.7 Ներդրողի հետ համատեղ պետք է ներգրավել ագրոնոմ-մասնագետների և այլ մասնագետների, ներառյալ գիտական բազան:

5.2.8 Կատարել քննություն անկախ լաբորատորիաներում սերմերի, վառելիքի և այլ նյութերի որակը սահմանելու համար (որակի և համապատասխանության վերաբերյալ):

5.2.9. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողը պարտավոր է ապահովել բոլոր պայմանները Ներդրողի կողմից սույն պայմանագրով նախատեսված իր բոլոր իրավասությունները պատշաճ և էֆեկտիվ իրականացնելու համար, այդ թվում նաև Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կողմից:

5.3. Սույն պայմանագրի կնքման նպատակին հասնելու համար Ներդրողը իրավասու է (պայմանագրի կնքման պահից սկսած)՝

5.3.1. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմինների որոշումները լուծելու սույն պայմանագրին համաձայն,

5.3.2. Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմիններից ստանալու տեղեկատվություն Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի գործունեության մասին, ներառյալ ծանոթանալու հաշվապահական հաշվառման փաստաթղթերին և ֆինանսական հաշվետվությանը, ինչպես նաև Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի այլ հաշվետվություններին,

5.3.3. նախապես համաձայնեցնելու Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմինների օրակարգը և այդ օրակարգով ընդունված որոշումները, ինչպես նաև պահանջել այդպիսի նախնական համաձայնեցում,

5.3.4. առաջարկելու Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի թեկնածուներ Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմիններում ընտրելու, ինչպես նաև տալ առաջարկություններ մարմինների անդամներ ընտրելու/վերընտրելու կամ դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը (այդ թվում աշխատանքային փոխհարաբերությունների վաղաժամկետ դադարեցմանը Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մարմինների համապատասխան անդամների հետ),

5.3.5. գրավոր դիմել Գյուղատնտեսական արտադրանք արտադրողին , ի դեմս իր լիազորված մարմնի, հարցումով գործունեության վերաբերյալ,

5.3.6. պահանջել անհրաժեշտության դեպքում աուդիտորական կազմակերպության կողմից անցկացնել Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի աուդիտ,

5.3.7. անհրաժեշտ ծախսերի փոխհատուցում, որոնք արվել են կառավարչական գործառույթների իրականացման համար,

5.3.8. իրականացնել այլ իրավասություններ, որոնք նախատեսված են սույն պայմանագրի 2.4. կետով:

5.4. Սույն Պայմանագրի նպատակների իրականացման համար Կողմերը պարտավոր են՝

5.4.1. իրականացնել սույն պայմանագրով իրենց նախատեսված իրավասությունները սույն պայմանագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում,

5.4.2. իրենց պարտականությունները կատարելիս առաջնորդվել Ղազախստանի Հանրապետության օրենսդրության և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան,

5.4.3. չտարածել տեղեկությունները, որոնք ճանաչվել են Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի կոմերցիոն գաղտնիք, ինչպես նաև իրեն հայտնի դարձած Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի ցանկացած մասնակցի օրենքով պաշտպանված տեղեկատվությունը:

6. Ֆորս – մածոր

6.1. Կողմը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի կատարման և պատշաճ կատարման անհաղթահարելի ուժի ի հայտ գալու պայմաններում:

6.2. Անհաղթահարելի ուժի պայմաններ (ֆորս-մածոր) են հանդիսանում այն իրադարձությունները, որոնք անհնարին է կանխատեսել և որոնց հետևանքները անհնարին է կանխել՝ պատերազմական կոնֆլիկտներ, բնական աղետներ(ջրհեղեղներ, երկրաշարժեր, հաղորդակցության խախտումներ և այլն). Ֆորս-մածորը կամ երրորդ անձանց գործողությունները չեն ներառում իրենց մեջ գործադուլները, անբարենպաստ եղանակային պայմանները, Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի աշխատակիցների բողոքի ձևերը:

6.3. Կողմը, որը ի վիճակի չէ կատարել սույն պայմանագրի պարտավորությունները՝ կապված ստեղծված անհաղթահարելի ուժի ի հայտ գալու իրավիճակից, պարտավոր է գրավոր տեղեկացնել դրա մասին մյուս կողմին ոչ ուշ, քան 7 (յոթ) աշխատանքային օրում այդ հանգամանքների ի հայտ գալու պահից:

7. Գաղտնիությունը

7.1. Սույն պայմանագիրը կնքելու մասին տեղեկատվությունը և դրա բովանդակությունը գաղտնի են, պարունակում են սույն պայմանագրի Կողմերի համար կոմերցիոն և օրենքով պաշտպանված գաղտնիք:

7.2. Կողմերից որևէ մեկը, առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության, իրավունք չունի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և դրա դադարեցման ժամկետի լրանալուց 3 (երեք) տարի հետո պայմանագրի բովանդակությունը և դրա կնքման

փաստը բացահայտել: Սույն կետի դրույթը չի կիրառվում այն դեպքերում, եթե այդպիսի բացահայտումը պարտադիր է համաձայն Ղազախստանի հանրապետության օրենսդրության կամ այլ կիրառվող իրավունքի, եթե բացահայտող կողմը մյուս կողմին ուղարկում է հաղորդագրություն այդ բացահայտման անհրաժեշտության մասին և ձեռնարկում է բոլոր միջոցները ինքնուրույն կամ մյուս կողմի հետ համատեղ վնասները կանխելու կամ հնարավոր նվազագույնի հասցնելու ուղղությամբ, որոնք կարող են ի հայտ գալ կողմերից ցանկացածի կամ Գյուղատնտեսական արտադրանք արտադրողի մոտ:

8. Կողմերի պատասխանատվությունը

8.1. Կողմերը պատասխանատվություն են կրում պայմանագրում նշված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման համար՝ համաձայն սույն պայմանագրի և Ղազախստանի հանրապետության օրենսդրության:

8.2. Կողմերից ցանկացածի և գյուղատնտեսական արտադրանք արտադրողի այն գործարքները, որոնք խախտում են սույն պայմանագրի պայմանները և պահանջները, հիմք են հանդիսանում դատական կարգով դրանց չեղյալ ճանաչման, իսկ մեղավորները՝ Ղազախստանի օրենսդրությանը համապատասխան ենթարկվում են պատասխանատվության:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն պայմանագրի շրջանակներում չկարգավորվող բոլոր հարցերը կարգավորվում են օրենսդրությամբ:

9. 2. Եթե Կողմերի միջև ծագած վեճերը չեն լուծվում բանակցությունների միջոցով, վերջնական լուծման նպատակով փոխանցվում են հայցվորի բնակության վայրում գտնվող իրավասու դատարան: Դատարանի որոշումը վերջնական և պարտադիր է լինելու Կողմերի համար:

9.3. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից ստանձնած պարտավորությունների լիովին կատարումը:

9.4. Եթե Կողմերից որևէ մեկը չի հայտարարում պայմանագրի կասեցման մասին, դրա ավարտի օրը պայմանագրի ինքնաբերաբար նույն պայմաններով երկարաձգվում է հաջորդ 36 (երեսունվեց) ամիսը:

9.5. Պայմանագրին կից բոլոր հավելվածները, ներառյալ պայմանագրի փոփոխության և լրացումներ կատարելու համաձայնագրերը, հանդիսանում են պայմանագրի անբաժանելի և

անհրաժեշտ բաղկացուցիչ մասերը և պետք է ստորագրված լինեն կողմերի կողմից լիազորված անձանց կողմից:

9.6. Պայմանագրի շրջանակներում ցանկացած գրագրություն, ծանուցում և այլ տեղեկատվություն կողմերի միջև կարող է իրագործվել նամակագրության, էլեկտրոնային հաղորդագրությունների և ֆաքսի միջոցով, ուղարկված սույն պայմանագրով նախատեսված կողմերի վավերապայմաններով, որոնք նշված են պայմանագրի 10-րդ բաժնում:

9.7. Պայմանագիրը կազմված է ռուսերեն լեզվով յուրաքանչյուրը երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ և տրված են կողմերին մեկական օրինակով:

9. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները

Ներդրող

<<Շմարոկ>> ТОО

Ղազախստանի հանրապետություն, ք.Աստանա 010000,

Աբայի պող, տուն 47, օֆիս N705,

БИН140840009486

KZ2694805KZT22031862

Մասնաճյուղ N5 АО <<ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԲԱՆԿ>>

Աստանա քաղաքում

БИК EURIKZKA

Տնօրեն

_____ Ա. Կոսիմով

Գյուղատնտեսական արտադրանք արտադրող